

թեմում որպիսի հետևանքներ կ'թողնի հրատարակուած նոր կանոնադրութիւնը, միայն նրա լոյս տեսնելը մենք յիշատակում ենք իբրև մի ուրախառիթ երևոյթ:

36. Առողջապահիկ քերք, կիսամեա ցկարագաբ ցանդէս լամբագիր-հրատարակիչ դր. Վահան Արծրունի. առաջին շրջան, № 1, 1903—1904: Հրատարակիչ քօիշի Արծրունին հայ գրականութեան մէջ քաջածանօթ անձնաւորութիւն է. նրա սկսած գործը կարօտ է առանձին յանձնարարութիւնների, առաջի համարում աշխատակցող քօիշիներէ անունները պերճախօս ապացոյց են, որ նոր թերթի հրատարակութիւնը մասնագէտ քօիշիները իրենց սրտին խիստ մօտ են ընդունել և եթէ դրա վրայ էլ աւելացնենք թերթի նպատակը—«Առողջ հասարակութիւնը արտադրում է աւելի աշխատանք, քան վատառողջը, և այսպիսով նա հարստանում է, իսկ հարստութիւնը տալիս է և մեւս բարեքները, որոնցից կազմւում է այն, ինչ որ անուանում ենք ընդհանուր առմամբ առաջադիմութիւն ... Թերթի նպատակն էլ հէնց այն է, որ տայ ժողովրդին դիւրամատչելի ձևով այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ամեն մէկին իւր առողջութիւնը պահպանելու համար»—, կմնայ մեղմիայն ի բոլոր սրտէ բարեմաղթել, որ անհրաժեշտ և այդքան յաջող պայմաններում սկսուող թերթը հայ հասարակութեան ամենալայն խաւերում, սկսած գիւղացու խրճիթից, մինչև քաղաքացու ապարանքը, մուտք գանի և տարածումն ունենայ: Այդ բանին շատ է նպաստելու երկշաբաթեայ թերթի դնի աժանութիւնը—2 ր. 10 կ (10 ֆր.) մաս մաս վճարելի, որով բաժանորդները կստանան նաև ձրիաւար 4 մինչև 6 նկարազարթ գրքոյկներ:

Մետօպ վարդապետ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ստորեկայ ցաւակը.—Իտալացի ինժինէր պրոֆ. Պինօն վերջերս հնարել է ջրի տակի նաւակ, որը ամբողջովին պողպատեց է շինուած, նաւի տակը անիւներ կան, որոնցով նա գլորւում է ծովի յատակի վրայ: Բացի սրանից նաւակն ունի երկու երկար լծակներ, որոնք ձեռքերի պէս ընծում են ջրի տակը դրսև

Աղգիս Վեհափառ Հայրապետը տարոյս սկիզբն հաստատել է այս կանոնադրութիւնը, որ Ատրպատականի առաջնորդը ներկայացրել էր նախապէս քննել տալով երեք «մասնադէտ և կանոնադէտ յանձնաժողովներին» ձեռքով: Կանոնադրութիւնը պարունակում է. Ա. ընդհանուր կանոններ, յօդուած 1—22 թեմական իշխանութիւն՝ Ա. թեմական ժողով, յօդ. 23—24, Բ. թեմական առաջնորդ, յօդ. 35—42, Գ. թեմական խորհուրդ, յօդ. 43—54, III գործակալութիւն, յօդ. 55—75, Դ. թիական համայնք (եկեղեցի) յօդ. 66—73. և թիական կանոնադրութիւն յօդ. 1—100.

Եթէ իրաւ է, որ ամենալաւ խմբագրուած օրէնքները գործադրող մարմինների ապիկարութիւնից և անիրաւութիւնից մնում են միայն իբրև պատմական յիշատակաբաններ—Տաճկաստանի պէտական օրէնագրութիւնը հիմնուած է նապօրէնի հռչակաւոր օրէնագրքի վրայ—անուրանալի է նմանապէս, որ կարգ ու կանոնի ձգտումն ու յախումն ունեցող ժողովրդի համար մեծ նշանակութիւն ունի այն աշխատանքը, որ գործ է դրւում ուղիղ հայեացք տարածել նրա իրաւանց և պարտականութեանց մասին: Ժողովրդի համար հրատարակուած այդպիսի կանոնադրութիւնները մեռած տառեր չեն մնում, ժամանակ անցնելուց յետոյ աննկատելի կերպով շատ յօդուածներ ստանում են գործնական նշանակութիւն իրական կեանքի մէջ: Ատրպատականի համար հրատարակուած եկեղեցական կանոնները՝ հիմնած Հայաստանեայց եկեղեցու դարերով սրբագործուած կանոնների և սովորութիւնների վրայ, պէտք է որ մեծ դարկ տան ժողովրդի ինքնագիտակցութեան և աւելի կենդանացնեն եկեղեցական կեանքը: Ս.յդ երկրում իրաւունք և արդարութիւն չափազանց փոփոխական դադափարներ են, նոցա սահմանը որոշողը հոգևոր և մարմնաւոր վարչութեանց գլխին եղող պատահական անհատներն են և ժողովուրդը սովորել և ընտելացել է այդ բանին: Որքան մեծ բարիք է, երբ դրաւոր կերպով այդ ժողովրդի ձեռքն էք տալիս մի հրահանգութիւն և նա տեսնում է թէ ինչ պարտքեր ունի իւր առաջնորդը և ինչպիսի սահմանափակումներ կան նրա գործունէութեան մէջ: Հանգուցեալ Նսայի արքեպիսկոպոս Տէր-Աստուածատրեանը առաջինը եղաւ, որ Նոր-Ջուղայում առաջնորդական խորհուրդ հաստատեց և կանոնադրութիւն հաստատեց իւր թեմի համար: Առաջնորդական խորհուրդը բաւական յաջող և գոհացուցիչ եղանակով վարում է եկեղեցական և դպրոցական գործերը և, որքան յայտնի է, ունեցել է բարեբար ազդեցութիւն: Ապագան ցոյց կ'տայ թէ Ատրպատականի

Նուաժ այս կամ այն առարկան: Նաւակի ապակեայ պատուհաններից արտացոլում է շատ պայծառ էլէքտրական լոյսը, որ ահագին տարածութեան վրայ ցերեկուայ պէս լուսաւորում է ջրի զանգուածը և թոյլ տալիս 200 մետր հեռաւորութիւն ունեցող առարկաների պատկերները քաշելու: Նաւակն 9 մետր երկարութիւն և 5 մետր լայնութիւն ունի: Մի քանի ժամանակ առաջ հնարողն այս նաւակը փորձի ենթարկեց, իմանալու համար, թէ նա որ չափով համապատասխանում է իւր նպատակին: Ճենովայի ծոցում դիտմամբ մի փոքրիկ մակոյկ ջրի տակը սուղեցին և պրոֆ. Պինօն յանձն առաւ 40 սաժեն խորութիւնից դուրս հանել այն: Իւր օգնականի հետ պրոֆեսորն ընկղմուեց ջրի յատակը. չանցաւ տասը ըոպէ և ահա նաւակը նորից երևեցաւ ջրի մակերևոյթի վրայ, իւր պողպատէ ձեռքերում բռնած աւենաւալով ընկղմուած նաւակը: Պէտք է նկատել, որ նաւակի տեղն որոշ յայտնի չէր Պինօին, այնպէս որ ստիպուած եղաւ ջրի տակը յատակի վրայ մի քանի պտոյաններ գործել, մինչև որ նաւակը տեսաւ. այս բոլորի համար միայն 10 ըոպէ հարկաւորուեց:

Աւստրալիայի ստալակտիտի այրերը. — Աւստրալիայի ամենաերևելի վայրերից մէկը պէտք է համարել Վապոյտ լեռներից մէկի՝ Մօունդ Վիկտորիա գագաթի այրերը: Աւստրալիական բնութեան այս սքանչելիքներն իրանց գեղեցկութեամբ և փառաւորութեամբ համարձակ կարող են մրցել Հին և Նոր Աշխարհի նոյնանման հրաշալիքների հետ:

Մօունդ Վիկտորիա սարը Սիդնէյից հեռու չի գտնուում, այնպէս որ ճանապարհորդներն այցելելով Սիդնէյ քաղաքն, աւելորդ չեն համարում տեսութեան դնալ նաև վերոյիշեալ այրերին, որոնք Ենոլանեան են անուանուում: Հեռաւորութիւնը 40 անգլ. մղոն է, որ պէտք է ձիով անցնել, որովհետև դեռ ևս երկաթուղու գիծն անցկացրած չէ. ճանապարհն անցնում է գեղեցիկ էվիալիպտ ծառերի միջով, որոնց նօսը շարքերի միջից հեռու հորիզոնում երևում են գեղատեսիլ Վապոյտ լեռները: Վեց ժամից յետոյ հասնում էք. այրի մօտ հանդիպում էք փորձուած ուղեկցի, որ պատրաստ է ձեզ առաջնորդել: Նրա ուղեկցութեամբ դուք վախճելով ներս էք մտնում ստորերկրեայ կամարների տակ և յանկարծ ձեր աչքի առաջ բացւում է ամենագեղեցիկ այրերից մէկը:

Այս առաջին այրը զարմացնում է ձեզ իւր բազմազանութեամբ և գեղեցկութեամբ. ստալակտիտային դահլիճի զանազան

տեղերից կախուած են էլեքտրական լապտերներն, որոնք առաւել ևս գեղեցկացնում են առանց այն էլ գեղեցիկ պատկերը. թւում է թէ ամենահանճարեղ դեկորատորի ձեռքերն են բանեղ այստեղ, այն առաիճանի բնականին նման չեն պատերի և առաստաղի ստալակտիտային դուրս ընկած մասերը. դրանք աւելի յիշեցնում են փառաւոր կերպով դարգարուած և նկարուած դահլիճներ: Բոլորովին անհաւատալի է թւում, որ գոյների այսքան հրաշալի շողշողանքներն և քնքոյշ, քմածին ծալուածքներն անշարժ քարէ պատերի բնական գոյներն ու ձևերն են, և սպասում ես, որ թեթև քամուց նրանք կշարժուեն և կծածանուեն, ինչպէս թեթև հիւսուածք:

Այրերի պայծառ, կիսաթափանց հիմնական ֆոնի վրայ տարածւում են լեռնային այլ բաղադրութեան մութ—չադանակադոյն երակներն, որոնք իրար հետ միաւորուելով սքանչելի նկարներ են գոյացնում և այսպիսով ընդհանուր տեսարանն աւելի դրաւիչ դարձնում: Սակայն ստիպուած էք լինում ձեր հիացմունքին վերջ տալ և անցնել միւս դահլիճները:

Քարէ պատի մէջ մի նեղ անցք է բացւում, որ ձեզ տանում է հարևան այրը. սրա ստալակտիտային զարդարանքները նախընթացից աւելի քնքոյշ ու փառահեղ են. հետաքրքրուող ճանապարհորդներից պաշտպանելու համար պատերի վրայով թեթև մետաղեայ ցանցեր են տարուած: Այստեղ ամենից առաջ ձեր ուշադրութիւնն է գրաւում մի կողմը գտնուած գեղեցիկ կերպով ձևաւորուած կիսաթափանց ստալակտիտի սիւնը, նա մօտ 5 ոտն. 8 մասն. բարձրութիւն ունի: Այստեղ յիշենք, որ ստալակտիտ են կոչւում այն կազմութիւններն, որոնք վերևից ներքևն են իջնում, իսկ ստալագմիդ՝ որոնք վերևն են բարձրանում: Այս այրի մնացած ստալակտիտի և ստալագմիդի կազմութիւններից յիշենք մի քանիսի անուններն, որոնք այնքան էլ բանաստեղծական չեն՝ «եզան լեզուն», «ընծուխտի ոտները», «երբայական քիթը» և այլն:

Այնուհետև ճանապարհը տանում է դէպի այսպէս կոչւած, «բիւրեղեայ քաղաքները»: Եւ իրօք, կրային բաղադրութեան այս զանգուածները տեսնելով, երևակայութիւնն ակամայից դաճաճների բնակարաններն է յիշեցնում, այնքան նման են սրանք մարդկային շինութիւններին իրանց ձևերով և դասաւորութեամբ, թւում է թէ փոքրիկ պատնէշներն ու ամրութիւնները շրջապատուած են անտառներով և բիւրեղեայ լճերով, և դժուարութեամբ ես հրաժարուում այն մտքից թէ, այս բոլորը հմուտ արուեստագործի ձեռքերի արդիւնքը չէ: Փոքր ինչ հե-

առե ուղեկիցը ձեր ուշադրութիւնը դարձնում է երկու սաժենից աւելի բարձրութիւն ունեցող և երկու ռանաչափից աւելի տրամագիծ մի մեծ ստալաիտիտային սիւնի վրայ. որպէս զի կաթիլ առ կաթիլ ծորելուց այս մեծ ստալաիտիտը կազմուի երկրաբանների հաշուելով 10 միլիոն տարի է հարկաւոր:

Հետեւեալ դահլիճը կրկին անգամ դարձացնում է ձեզ իւր հանքային կազմութիւնների նրբութեամբ և թեթեւութեամբ կարծես թէ աչքիդ առաջ կախուած են քարացած ամենամուրաւոր ասեղնադործ ժապաւէտներ և բարակ սպիտակ թելեր. այս բոլորը բոլորովին թափանցիկ է, այնպէս որ նրանց միջից կարելի է պարզութեամբ որոշել մինչև անգամ այրի պատերի գոյնը: Սրանից քիչ հեռու ձեզ ցոյց կտան մի այլ, որ կոչւում է «արքայական ադամանդներ». այստեղ առաստաղն ու պատերն ծածկուած են անթիւ բլրեղներով, որոնք փայլում են և իսկական ադամանդների նման շողշողում: Մեծ հայելին, որ անզրադարձնում է այրի յատակը, ստորերկրեայ դահլիճին աւելի ևս կախարդական տեսք է տալիս: Այնուհետև դուք մտնում էք «ս. Ղուկասի այրն», որ Ենոլանեան այրերից ամենամեծն է, նա ունի 36 սաժեն երկարութիւն, 20 սաժեն լայնութիւն, իսկ բարձրութիւնը շատ և շատ է: Այստեղ ամենամեծ հետաքրքրութիւն դարձեցնում է այնպէս կոչուած «կոտրուած սիւնն», որ միացնում է այրի առաստաղն ու յատակը: Ամենայն հաւանականութեամբ այս ստալաիտիտային սիւնը անհամեմատ աւելի ուշ է կոտրուել, քան նա գոյացել է ու ամրացել. կոտրուելու պատճառն երևի առաստաղի կամ յատակի կրած փոփոխութիւնից է առաջ եկել. վերջինս էլ ստորերկրեայ ոյժերի արձագանքի արդիւնքն է: Յամենայն դէպս այս սիւնը ներկայումս շատ տարօրինակ կերպարանք ունի: Գեղեցիկ տեսարան է ներկայացնում նաև «կորալական կիճը». սրա պատերն ու յատակը ծածկուած են զանազան բազալտութիւններով, որոնք բարակ թաղիքի նման են և ծածկուած են ձիւնանման սպիտակ հատիկներով. այստեղի մի քանի կազմութիւններ իրանց ձևով և գոյներով կատարելապէս նման են մարջաններին, իսկ երբեմն՝ խաղողի ողկոյղներին: Մնացած այրերից մէկում դանդաղում է այսպէս կոչուած «հիստերիա» կախարդական քարէ կազմութիւն, որը ոչ միայն հիանալի գոյներովն ու գեղեցիկ ձևերով է դարձացնում, այլ և հիացնում է գիտնականներին նրանով, որ ըստ երևութիւն մեքենայագիտութեան բոլոր օրէնքներին հակառակ է. քարէ սիւները փաթաթւում են իրար վրայ, վերէն են բարձրանում, ներքէն են կախուում, թեք դիրքով կախ ընկնում և այսպիսով

կախարդական պատկեր դրոյացնում, որ ոչ մի բանի հետ չի կա-
րելի համեմատել: Անդհանրապէս Ենտրանեան այրերի ստալակ-
տիտային կազմութիւններն իրանց բազմադանութեամբ և հոյա-
կապութեամբ շատ զարմանալի են և եթէ մանրամասն նկարա-
գրուելու լինէին ըստը հրաշալիքներն, ամբողջ հասոր կհարկա-
ւորէր. իսկ մեր տուած կարճառօտ նկարագրութեամբ միայն
շատ թոյլ դադափաբ կարելի է կաղմել այն մասին, թէ հանքա-
յին մեռած թագաւորութիւնը ստորերկրեայ միջին դժուարա-
մատչելի այրերում ինչ տեսակ գանձեր է բովանդակում:

Տարաբազդաբար դանադան պաշտպանողական ցանցեր,
գրութիւններ և այլն, որոնք պաշտպանում են այրերն աղան-
ճանապարհորդների յալիշտակութիւններից, սառածի լեռնաբա-
րում են տպաւորութեան ամբողջութիւնը սթանալ, իսկ այրերի
ասպագայ բազդը կախում է ձեռք առնուելիք միջոցներից:

Ֆինլանդիայի արդիւնաբերական զարգացումը.—Պէս դար
առաջ Ֆինլանդիան մեծ մասամբ երկրագործական երկիր էր.
Ներկայումս երկրագործական—արդիւնաբերական երկրների շարքն
է անցել, բնական հարստութիւններով երկիրն շատ աղքատ է,
կլիման ցուրտ է, հում նիւթերն էլ քիչ: Վապիտալիտական
անտեսութեան զարգացումն այսպիսի երկրում ամենից աւելի
լաւ հաստատում է, որ նրա ծանրութեան կենդրոնը ոչ թէ
երկրի բնական պայմանների մէջ պիտի որոնել, այլ համայնական:
Վապիտալի հետ առաջ է եկել և բանուոր դատակարգը. երկրի
անտեսական դրութեան համար մեծ նշանակութիւն ունի ար-
տաքին վաճառականութիւնն, որ 1850 թ. մինչև 1900 թ. աւաիա-
նը 44 միլիոն ֆինլ. մարկից հասաւ 468 միլ., այսինքն տաճար-
պատկուեց: Անտառների առատութիւնն և էփան շարժիչ ոյժի
շատութիւնը արդիւնաբերութեան համար շատ զօրեղ միջոց
դարձան, ուստի և վերջին տաճարամեակներում շատ առաջ
դնաց: Այսպէս, 1887 թ.—1898 Ն. արդիւնաբերական գործա-
րաններն 5615-ից դառան 7787, բանւորների թիւը հասաւ
91055-ի: Ֆինլանդական արդիւնաբերութեան համար բնորոշ է
այն հանգամանքն, որ արդիւնաբերական ձեռնարկութիւններն
ամենից աւելի հաստատուած են դիւղերում և խորը կենդրոն-
ներից հեռու են: Այս հանգամանքը բացատրւում է նրանով, որ
ջրի էփան շարժող ոյժեր, ինչպէս՝ ջրվէժներ և այլն, ինչպէս և
էփան բանւորները դիւղերում կարելի է գտնել. բացի զբանից,
գործարանների մի մասը, որ ներքին ոսկառողութեան համար
իրեր է պատրաստում, աշխատում է տեղական վաճառանոցներին

մօտ լինել: Քաղաքներից արդիւնաբերութեան մէջ առաջին տեղն է ըսնում Տամբերֆորս—Ֆինլանդիայի Մանչեստերը, յետոյ՝ Էլեկտրիֆորս, Աբօ և այլն:

Ֆինլանդական արդիւնաբերութեան և վաճառականութեան գլխաւոր նիւթն է փայտը: Հանքային հարստութիւններից կան՝ երկաթ, պղինձ, կապար, ոսկի և արծաթ, բայց սրանք շատ քիչ քանակութեամբ են ստացւում: Արդիւնաբերութեան որ ճիւղն էլ վերցնելու լինենք, կտեսնենք, որ դրանք ի նպաստ ունենոր դասակարգի են, որ և վայելում է երկրի հարստութեան պտուղները: Մինչ կենսական առաջնակարգ պիտոյքները քանի գնում թանգանում են, աշխատող դասակարգի վարձատրութիւնը մնում է նոյնն, որով և աւելի վատթար վիճակի է մատնւում: Երկրի ընդհանուր քաղաքակրթութիւնը միջոց է տուել բանուորներին յետ չմնալ ընդհանուր առաջադիմական հոսանքից: Էլ չխօսելով գրադարանների, ընթերցարանների և դպրոցների մասին, որոնք բանուոր դասակարգի համար առատութեամբ բացուած են, յիշենք, որ լրագիրն օրէցօր աւելի և աւելի է տարածւում նրանց մէջ:

Տ. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ



Հեռագիրն գութեց որ Յուլիսի 12-ին ցերեկուան ժամի 5-ին երկարատև հիւանդութիւնից վերջն առ Աստուած փոխեցաւ ամենապատիւ Տ. Տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրատեանց—Զմիւռնիոյ վիճակին Հայոց սիրելի Առաջնորդն և բազմարդիւն Հովիւն:

Երջանկայիշատակ հանգուցեալն ծնուած էր 1834-ին Նոյեմբերի 22-ին Արցախի Քաւս կամ Քուստի գաւառի (այժմ՝ Ղազախ) Տաւուշ¹⁾ Թովուզ գիւղում, նորա մկրտու-

1) Այս գիւղն առած է Հայ կրօնաւորութեան, գրականութեան և վարժապետութեան շարքում երեք հռչակաւոր անձինք—Յովհաննէս եպիսկոպոս Տուեցի, Յովհաննէս-վանական վարդապետ և Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրատեանց: